

ՊԱՏԱՍԽԱՆ Տ. ԶԱՐԵԶ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Քարոյական հարկադրանքով մը կուտամ նաև իմ լուսարանությունը՝ Տ. Զարեհ սրբազանի «լուսաբանությանց», որոնք հրապարակագրված են տարվույս փետրվար 19-ի երեկոյին Անթիլիասի Հայրապետանոցի մեկ սենյակին մեջ տեղի ունեցած երկուրիս տեսակցության մասին:

Ըսեմ կտրուկ, թե այդ խոսակցությանց ընթացքին ես չեմ ըրած ինձ վերագրված հարցումը. «Արդյո՞ք իմ ընտրությամբս կացությունը կփրկվի»:

Անթիլիասի հայրապետական ընտրության թնճկոտ հարցի շուրջ և շատ կանուխեն ունեցեր եմ թղթակցություններ իմ վաղածանոթ մեկ բարեկամիս հետ, որուն հանկերզն է եղած, թե այս խնդրի միակ լուծումը պիտի ըլլա իմ հավանությունը՝ ընդունելու Անթիլիասի հայրապետությունը: Իմ պատասխաններս եղած են միշտ բացասական, կարգ մը լուրջ և բանավոր պատճառներով: Եվ գիտեամեն որ, թե գրավոր հրաժարական ես տված եմ երկիցս՝ թեկնածուներն: Երեքնիցս եմ դաշն, Տ. Խաղ և Տ. Տիրան սրբազաններուն հետ, նաև Անթիլիասի մեջ:

Սակայն ասոր փոխարեն, ըրած եմ այլ թելադրություններ, նկատի առնելով իրական պահանջը՝ երջանկահիշատակ ու մեծատաղանդ Տ. Գարեգին Ա. Հայրապետի ճարտար ձեռքով և բարձր ոգիով վերածաղկած Աթոռին: Մատնացույց եմ ըրած կարևորությամբ նույնիսկ՝ ըստ ամենայնի արժանավորագույն թեկնածու մը և հաջորդ մը: Իմ թելադրությունս չէ ընդունված դժբախտաբար: Եվ իմ բարեկամը շարունակած է պնդել իր տեսակետին վրա, զոր ներկայացուցած է, ինչպես միշտ, իբրև տեսակետը նաև բոլոր կողմերուն, վանքի միաբանության և նույնիսկ Տ. Զարեհ սրբազանին: Տ. Դերենիկ, Տ. Խորեն և Տ. Ղևոնդ եպիսկոպոսները ես, իրենց Ստամ-

բուլ այցելության առիթով, նույն տեսակետն են հայտնած, բայց վերադարձած են իմ մերժողական պատասխանով:

Բարեկամիս վերջին նամակներն մեկը, սակայն, մղած է զիս քիչ մ'ավելի խոր մտահոգության: Ունեցած եմ վարանում: Ապա, իրեն ուղղված իմ 1955 նոյեմբեր 16 թվակիր պատասխանագրիս մեջ ըսած եմ. «Թեև ինձ համար փակված հայտարարած էի, ինչպես գիտես, Անթիլիասի հայրապետական խրեզիրը, բայց սրտակսկիծ ցավով լսելով այն տխուր բարդությունը, որ ստեղծված է անոր շուրջ... Թե՛նվ՛Ա պիտի կրեմ ընդունիլ Անթիլիասի հայրապետությունը», պայմանով որ՝ 1) ընտրությունը կատարվի միաձայնությամբ, ազգայնա ու անիմաստ երկպառակությանց բարձումը տեսնելու փափագով, 2) մեկնելն առաջ կարենամ կարգադրել այս Աթոռի գործերը, ապահովելով ստեղծված կացության պահպանումը:

Այս գրությանս մեջ անվերապահորեն պարզած եմ նաև իմ հետեւիք «աղեկիծը», որուն ոգին կարելի է տեսնել Կահիրեի Եպիսկոպոսական ժողովի կողմն խմբագրված «Համաձայնագիր»-ի մեջ՝ մեկին կերպով: Եղճի թելադրությամբ ըրած էի իմ այս զիջումը, մեծ մտահոգությամբ նկատի առնելով Անթիլիասի Հայրապետության սահմանափակ շրջանակին մեջ ապրող հայ հավատացյալ բնկորներու սիրտ անքակ միության և զանոնք հոգևորապես թեապարփակող Հայաստանյայց Եկեղեցվո անխախտիլի միասնականության գաղափարին վերահաստատումը, խորացումն ու արմատացումը՝ հավատքի, ողջմտության և հեռատեսության լույսին տակ, և գերագույն ու անշահախնդիր զոհաբերության խորապես գիտակից հանձնառությամբ: Եվ այս՝ քաղաքական, կուսակցական և հատվածական նախապաշարյալ հաշիվնե-

րի վեր, բյուզանդական կործանարար վեճերն զերծ և արտաքին սին փառքերու շքեղանքներու մոլորեցնող խայծերեն զգուշը:

Այս գիտենք միակ ուղին, ուղիղ և անսայթաք, բոլոր անոնց՝ որոնք անդրժող ուխտագիրներ են ծառայելու Աստուծո՝ և Հայաստանյայց եկեղեցիին, և կապված են անոր անտեսանելի «Զորագլուխ»-ին, «Կենդանի ՎեՄ»-ին՝ Քրիստոսի, և տեսանելի Գլուխին՝ Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթո՞ւ Ս. Էջմիածին: Այո՛, այս ճշմարտությունն է՝ «ճշմարտության մալեղամ շենք կրնար փոխել», սիրելի եպիսկոպոսակիցներ, առանց կրկնու առոր անխուսափելի հետևանքը, — դատապարտությունը մեր իսկ խղճին և հավատացյալ հանրության առջև:

Եվ ահա՛ վերև հիշված իմ բնական համաձայնությունն, զոր Զարեհ սրբազան շարափոխած է դժբախտարար, վերածելով զայն հարցումի մը, որպես թե եղած իմ կողմի իրեն՝ Անթիլիասի մեր խոսակցության միջոցին:

Այո՛, մեր այդ առանձին տեսակցության ընթացքին, ես Նորին Սրբազնության ըրած եմ այլ թերահրույսություններ, կատարյալ բարեմբուսություն, անկեղծություն մը և խնդրին բարի ելք մը տալու նախանձախնդրությամբ: Եթե ինք ասոնց ահանջ տված ըլլար հանգարտ ու անկաշկանդ տրամաբանությամբ, գուցե իրերը այլ կերպ դասավորվէին և շրտեղծվեր փետրվարի 20-ի առաջ բերած ազեալը՝ իր ամենատխուր հետևանքներով, զորս նախատեսել անկարելի չէր: Զարեհ սրբազան, կա՛մ շատ միամտորեն, կա՛մ քիչ մը հանձնապատասխանությամբ, ինձ հայտարարեց կտրժոր ծնծելով. «Անոնց ե՛ս միայն կրնամ խոսք հասկնել...»: Ես լռեցի, և այս եղավ վերջաբանը մեր տեսակցության, որ ընդհատվեցավ, երբ ինք կանչվեցավ դուրսն և մեկնեցավ: Եվ ա՛յ չիքինվեցավ այս ամուլ տեսակցությունը:

Այս դժպէի պատեհությամբ, հարկադրված ենք ուրիշ մով մըն ալ փարատել Ս. Զարեհ սրբազանի ուրիշ մեկ զուսարանութենէն:

Սրբազանը կրսե. «Եպիսկոպոսական ժողովի պալմանէր բացահայտակալն անբնդունելի էին: Ուխտագրի կմխտեր Մայր Տաճարի գոյությունը, քանի որ ընտրյալ Կարողի հոսք պարտավորության ներքե կզրկեր եզրապատու երթալու և իր ուխտը կատարելու, մայրավանքն ենու: Ան ապա կմխտեր Մաշտոցի ուխտը: Միաժամանակ անտրամաբանական էր և տեսնված բան չէր, որ Կարողի հոսք մը պարտադրվեր իր փոխանորդը»: Վերլուծելու համար «Համաձայնագիր»-ի ոգին, կրկին կհանձնենք զայն ամբողջու-

թյամբ հասարակաց լուրջ և ուշադիր նկատառությամբ:

Ո՛ր է անոր մեջ նախ՝ ժխտումը իրենց «Մայր Տաճար»-ին, Արդյոք զգուշացած է բակն՝ «Մայր Աթո՞ւ». ապա թե ոչ՝ անիմաստ պիտի ըլլար բացասական կեցվածք մը «Մայր Տաճար»-ի մը հանդեպ: Մենք ալ ունինք այստեղ «մայր եկեղեցի» մը, իբրեկ գլուխ Ստամբուլի մեջ գտնվող բոլոր հայ եկեղեցիներուն կամ տաճարներուն: Եվ արդարացնել այս ձրի վերագրումը այն շատ տկար պատմաբանություն մը, թե «ընտրյալ Կաթողիկոսը պարտավորության տակ կզրկեր եզրապատու երթալու և իր ուխտը կատարելու՝ մայրավանքն հետու»:

Արդ, Անթիլիասի մեջ կար մասնակի Աթոռի մը «ընտրյալ կաթողիկոսը», իսկ Կահիրեի մեջ էր Մայր Աթոռի Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետը և Մայրազույն Պատրիարքը, որ կգտնվեր Իր Աթոռն դուրս, բայց Իր եկեղեցիին — հավատացյալ ժողովրդին — մեջ: Եվ հրավեր կուղղեր «ընտրյալ»-ին, որ զեռ լրացուցած ալ չէր օրինավորության և նվիրագործման բոլոր անհրաժեշտ պայմանները: Եվ Գերագույն Պետին առջև ուխտագրություն մը՝ նկատելով վաստացում — մեր քրիստոնեական խղճմանքին մեջ տեղ չի կրնար գտնել այդ: Ես պիտի չուզեի Զարեհ սրբազանին մեջ տեսնել այսպիսի անսպասելի կեցվածք մը, անհամապատասխան իր կոչումին՝ որ, ամենեն առաջ, կպահանջէ եկզությունն ու խոնարհությունը Քրիստոսի, որուն ծառան է ինք և հետևողը պարտի ըլլալ: Կպահանջէ նաեւ ակնածանք՝ Միածնի տեսական Ոսկի ուռով հիմնարկված Հայաստանյայց եկեղեցվո բարձրագույն հեղինակության հանդեպ, ոչ թե ստրկարար, այլ ինքնակամ համակերպությամբ կարգապահական անեղծանելի ողվույն ամենախոր գիտակցությամբ:

Ի դեպ, պիտի հիշե անշուշտ Ս. Զարեհ սրբազան, թե Կոլոտ Պատրիարքի օրով Ուլնեցի Կարապետ Բ Կաթողիկոսը, Կոլոտի իսկ հրավերով ու կարգադրությամբ, իր հայրապետական ձեռնադրությունն ու օժտման ստացավ Ստամբուլի մայր եկեղեցիին մեջ Մայր Աթոռն ենու: Ականջը խոսի Զեպեյան Ս. Զեռնեկ եպիսկոպոսի, որ փորձեր է արդարապես զուցե մտադրված ապօրինի քայլ մը, Ավետարանին մեջ մտցնելով «Հարկ լուծանք զօրէն»-ի առածը:

Դարձյալ, և միանգամ ընդ միշտ, հարկ պիտի ըլլա խստորեն շեշտել, թե մի և անբաժանելի է Հայաստանյայց եկեղեցին իր Մայր Աթոռով՝ որ ի Ս. Էջմիածին: Եվ տակավին դժվա՛ր պիտի ըլլա ընդունել բացառապետությունն այս անհեղին ճշմարտության, և

անուրանալի իրողության, թե բոլոր մյուս Աթոռները, ըլլա Անթիլիասի Հայրապետությունը, ըլլան նրուադեմի և Բյուրքիո Հայոց Պատրիարքությունները և բոլոր առաջնորդությունները՝ ենթակա են անկայման Մայր Աթոռին՝ ի նոգադու: Ի՞նչ բան կա անհասկերալի այս ճշմարտության և ասկի բխած պահանջներուն մեջ: Արժանապատվության վերավորանք՝ ըստ աշխարհի...:

Նպիսկոպոսական «Համաձայնագիր»-ին մեջ պարզաբանված են այս բոլորը: Ով աչք ունի՝ կտեսնե՝ և դատողական ողջմտություն՝ կհասկնա: Մարեր ձորեր թափառելու պետք չկա լույս փնտրելու համար: Ան ինքն իր մեջ ունի լույսը, անով լուսարանելու համար նաև մոայլոտած և մշտնապատ մտքեր:

Այս Համաձայնագրին մեջ շեշտված է Անթիլիասի — որով և բոլոր Աթոռներուն — անկախությունը վարչական գործերու և գործառնության մեջ: Բայց կերեկ որոշ կերպով, թե Զարեհ սրբազան և համախոհներ չեն բավականանար ասով: Անոնք կուզեն չափիլ Մայր Աթոռի բարձրություն և տարողության հետ, և ըլլալ ոչ միայն «անկախ», այլ նաև... «անջատ»: Ունինք հրապարակային տխուր վիսյություն ասոր:

Այն փխրուն առարկությունը, թե «Ստամբուլի Պատրիարքը՝ Տ. Խորեն սրբազանին ըսած է. «Ազկն նշանախեց մը իսկ չեք կրնար փոխել», չի լուսարանել իմ խոսքը իր էության մեջ: Նախ որ Պատրիարքը բարձրագույն հեղինակություն չէ. կա նպիսկոպոսական ժողովը՝ իր վեհափառ նախագահով: Եվ վեհը հասակ կերպով, ոչ թե «ուշ» այլ Համաձայնագիրը հանձնած միջոցին հասկողներ է Տ. Խորեն սրբազանին, որ Անթիլիասի մեջ ևս քննեն պայն, ըստ իրենց իրավացի առաջարկության և իթն հարկ է՝ հակառաջարկներ ևս ներկայացնել, և ոչ թե բացարձակ մերժումով փակել ուզեն՝ այս կարգով չգողցվելիք ծանր խնդիր մը:

Ամենայն Հայոց Հայրապետին խոսքը, ուղղված Տ. Խորեն նպիսկոպոսին, Կահիրեի մեջ, թե «Ինչո՞ւ կմերժեք գայն կտրուկ կերպով և չեք բերեք ձեր հակառաջակը», և բանազանց Տ. Նզիշե արքեպիսկոպոսի հայտարարությունը, թե «Պանեղեք ոգին, բայց մի՛ կառչիք տալին» — ինչո՞ւ պարարտ գետին չէ գտեր սրտերու և մտքերու մեջ, և սրբազանները կառչեք են մեր էքս կարեւորա չեղող մեկ խոսքին, առանց թափանցելու անոր ներքին իմաստին: Տ. Զարեհ սրբազան չէ ըմբռնեք նաև ժողովին այն որոշումը, որուն համաձայն Կաթողիկոսի փոխանորդին բնարությունը հանձնված էր Միաբանական ժողովին, նկատի առնելով միայն ստեղծված կացությունը: Եվ սրբազանը ինչո՞ւ լուռ-

թյամբ կանցնի Համաձայնագրի այն պայմանին վրային, որով բոլոր հայ եկեղեցիներուն մեջ, Ամենայն Հայոց Հայրապետի անունն սեմիչապես ետք պիտի ճիշտավեր նաև անունը Անթիլիասի Հայրապետին: Այս ալ նվաստացում էր այդ Աթոռին, թե բարձրացում: Եվ նպիսկելի են մանավանդ այն դիտավորյալ խեղաթյուրումները, որոնցմով այդ համաձայնագրին պարզ ու անկեղծ ոգին ներկայացվեցավ հանրության:

Ամենաանպիսկում մը Անթիլիասի Հայրապետության իրավասությունը. — Անտառակոյս. վասնդի առանց աղոր՝ նա իր անկախությունը կտանի մինչև հավասարություն իր իրավական դիրքին՝ Զեղհանրական Հայրապետության հետ, «առաջին ի հաասարս» բացատրությամբ, «կարողիկոսական ձեռնադրությունը և օծումը շինել ծիսակատարում մը և ժողովրդեն ստացված վարչական իշխանության մը նվիրագործումը» համարելով: Տ. Զեղհե նպիսկոպոսի այն հարցումին, թե «Կարելի՞ է ցույց տալ կարողիկոսական ձեռնադրության և օծման կարգին մեջ նպիսկոպոսական աստիճանի հատուկ եկեղեցական իրավասություններ վեր իշխանության մը տվչության բանաձևը: Ի՞նչ կատանա ենթական իրեկ նոր իրավունք» — կպատասխանենք. «Ո՞վ ձեռնադրեց Զեղ եպիսկոպոս, Տ. Կարեղին Կարողիկոս, րե մի ոմն նպիսկոպոս»: Ավելորդ է մեկնաբանություն:

Բայց մեղի զարմանք ու ցավ կպատճառեն, արդարև, այն բռնազրոսիկ մեկնաբանությունները, որոնք ոչ թե խնդիր մը կլուսաբանեն, այլ տեղի կուտան նոր ու անվերջ ոչ-շինարար վեճերու, պարզ խնդիրներ ըստ ինքյան կատանան արվեստական բարդություններ և կղաճան ի վերջո ստիկնություններ, օրինակ, Տ. Զեղհե սրբազանի խարխուլ փաստարկությունները:

«Մարգարեությունը» — մեկնաբանություն — եկեղեցվո շինության համար է, ըստ առաքյալին (Ա. Կորնթ. ԺԴ 5): Ո՞ր է շինարար շնորհալի շունչը այս կեղծ «մարգարեությունը» մեջ, Ո՞ր են Ավետարանի ոգին, Խաչին զորությունը, Աշին լույսը, աստվածեղեն շողը, որ Միաձին էջով է կարած Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո մեջ: Բառերը, լայնքին ու երկայնքին քաշված ու քաշքշված, և ոգին ու կյանքն պարպված, խին մը անգամ անկարող են ավելցնել եկեղեցվո շքեղ շենքին վրա՝ երկնային տեսիլով ճարտարապետված, — թող թե չինել:

Ի զո՞ր են բոլոր փորձերը, որոնք չեն կատարվիր ավետարանական պարզ ճշմարտություններն բխած շունչով, ոգիով, լույսով և կյանքով: Ավետարանն է, ստուգիվ, Միրո և Լույսի աստվածաշունչ Մատյանը, որուն խոնարհ

պաշտոնյաներն են, և պարտին ըլլալ հոգևորականները՝ իրենց աստիճանին ու զիրքին վաշել ընթացքով: Ինչո՞ւ չենք ուզեր հասկնալ այս հավետ անփոփոխ ճշմարտությունը, և կզատածինք անել բավիղներու մեջ, ոչ խոկուն ենալով գոնե Արիանդեսի չվանը:

Նշենք և հետևյալը և վերջացնենք:

Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը երկիցս հեռագրով հրավիրեց Անթիլիասի բուլոր եպիսկոպոսները, — մեզն ըլլալով անշուշտ Զարեհ սրբազանը, — և աշխարհական ներկայացուցիչներ երկու կողմէն անխախտ, խաղաղասիրությամբ և համաձայնությամբ՝ կատարված ընտրության րեբին լրացնել և Զարեհ սրբազանի ընտրությունը նվիրագործելի հետո, օծումը, միայն այս անգամվան համար, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ կատարել սրտահույզ և պատմական դառնալու սահմանված հանդիսավորությամբ: Ի՞նչ ավելի իմաստուն և պատվաբեր հրավեր, և ի՞նչ ավելի շահեկան և Հայաստանյայց եկեղեցվո միասնականության ոգվույն համապատասխան կարգադրություն: Եվ երեսկայել, որ այս ալ մերժվեցավ, և մանավանդ, որ «նոր դավ» ալ տեսնվեցավ այս հրավերին մեջ «գործով շողացող մթարք ունեցող աշքերու կողմէն»: Ողբալի մտայնություն, որուն պատասխանատվության ծանր բեռը կիշնա, ամենեն առաջ, Զարեհ սրբազանին վրա:

Եվ դեռ կան մեր «անձնական» երկու գրությունները, Զարեհ սրբազանին ուղղված, եզրագրուսն մեր դառնալն է: Երբ որ պիտի չուզէ՞ր հրապարակել դանոնք ևս, որպեսզի երեսն բերվեր իր «լուսարանությանց» արժեքը և մեր զիրքը այս խնդրին հանդիպ:

Ո՛չ, սիրելի եղբայր՝ Զարեհ սրբազան, այս չէ շիտակ ճամբան: Լարծուն գետնի վրա կգտնվիր: Կրնաք Աթոռ բարձրանալ, բայց կարևորը կոշտի բարձրությունն է, որուն

հասնելու ճանապարհը այս չէ: Կոշտի ալդ բարձրությունը խոնարհության մեջ է: Խոնարհեցեք եկեղեցվո բարձր հեղինակության առջև, խոնարհելի ետք Փրկչի հեղինակության առջև, որ այս խոնարհությունը կպահանջի բոլորեալ Եվ Ձեզմե, որ չեք Ամենայն Հայոց Հայրապետ, այլ պիտի ըլլաք մասնակի Տան մը հովվապետ, երեք երկիրներու սահմանափակ ծիրին մեջ ամփոփված, ստացած և հոգևորական օծումը՝ ծնողալից եկեղեցիին՝ օրինապահությամբ և կարգապահական խաղաղարար ու շինարար ողիով:



Ահա՛ մեր լուսարանությունները Զարեհ սրբազանի մթազնած «լուսարանությանց»:

Մեր ամենապարտադին մաղթանքն է և աղոթքն առ Աստված, որ Խմաստության և ճշմարտության Հոգին առաջնորդի Նորին Սրբազանության մեր եղբոր և իր գործակիցներուն, և այդ ալեկոծյալ Աթոռին մեջ վերահաստատվին ըզձալի խաղաղությունը, կարգն ու կանոնը, միաբանական սիրո ներշնչումներով և զերծ այս ողբույն հակասող արտաքին որևէ թելադրություններ և ազդեցություններ, Փրկչին և մեր երանաշնորհ հայրապետներու լուսավոր ճամբով:

Մեկ է Հայաստանյայց եկեղեցին, մեկ է իր Գլուխը հանձնին Ամենայն Հայոց Հայրապետին, մեկ է այս եկեղեցիին պատկանող հավատացյալ հայությունը ի հոգևոր: Պառակտումն անոր՝ քայքայումը միայն պիտի ըլլա այն Աթոռին, որմե կուգա ան: Կմնա շնաստան եկեղեցվո լուսը, նվիրագործված Ս. Լուսավորչի տեսիլով և Միածնի էջքով՝ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին մեջ:

(Կոստանդնուպոլիս, «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթ, 11 օգոստոսի 1956 թ.)

